

ՍՈՒՐԲ ԵՐԿՐԻՆ

ՍՐԲԱՎԱՅՐԵՐՈՒՆ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ա. Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Ս. Հեղինէն՝ Կոստանդիանոս կայսեր մայրը Երուսաղէմ ուխտի գալով՝ անմիջապէս սրբագործել տուաւ հեթանոսական պաշտամունքներով պղծուած Տնօրինական Ս. Տեղերը. յետոյ կայսրը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ շինել տուաւ հոյակապ եւ ընդարձակ մայր եկեղեցի մը որ կոչուեցաւ Ս. Յարութեան Տանար (Anastasis), անոր արեւելքն ալ կառուցանել տուաւ գեղեցկաչէն Մատուռը (Martyrion): Այս երկու տաճարներուն շինութիւնը աւարտեցաւ 333 ին: 614 ին պարսից յարձակումներուն հետեանքով քանդուեցան կոստանդինեան այս Սրբավայրերը, եւ Մոսեստոս վերաշինեց զանոնք հրկիզեալ պազիլիքային յատակազօին համաձայն. բայց Մատուռը այլևս չշինուեցաւ: Մինչեւ ԺԲ. դար Ս. Յարութեան եկեղեցին եւ յարակից Ս. Տեղիք պարբերաբար կործանումներ ունեցան եւ նորոգութիւններ կատարուեցան. բայց խաչակիրք տեսնելով տաճարի շէնքին անյարմարութիւնները՝ Ս. Տեղեաց սրբութեան համապատասխան վիճակի մը վերածելու համար գլխաւոր Սրբավայրերը կեդրոնական եկեղեցիով մը կապելու գաղափարը ունեցան, որքան որ կարելի էր, պահելով վաղեմի շինութիւնները: Սաչակիրներու վերաշինութիւնը սկսաւ 1140 ին և աւարտեցաւ 1149 ին: Վերջին դարերու մէջ կատարուած ըս-